ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԲՄԱՊՁԲ-22-7/6-3 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 11.11. 2022թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «ՍԻ ՓԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ -ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Դանիելյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 11.10.2022թ. կնքված № ԲՄԱՊՁԲ-22-7/6-3 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.1 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **2 234 782 360 (երկու միլիարդ երկու հարյուր երեսունչորս միլիոն յոթ հարյուր ութսուներկու հազար երեք հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:** Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետին համապատասխան, եռամսյակներում առկա միջոցների հաշվին, բայց ոչ ուշ քան 26.12.2022թ.:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն պայմանագրի շրջանակներում պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչությունը, իսկ կառուցվածքային ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՍԻ ՓԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ .ք. Երևան, Պուշկինի 1
ՀՀ ֆինանսների նախարարության	«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 1660020375380100
Հ/Հ 900011144079	ՀՎՀՀ 02847546
ՀՎՀՀ 02522157	Տնօրեն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	
Կ. ԲՐՈՒՏՅԱՆ	Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հավելված N 1
№ ԲՄԱՊՁԲ-22-7/6-3 գնման պայմանագրի
N 1 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	Չ/մ	Քանակ	Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/	Ապրանքների մատակարարումը ըստ ամիսների 2022թ.
						Մինչև 20-ը դեկտեմբերի 2022թ.
5	Դիզելային վառելիք, ամառային /Ամառային դիզ.վառելանյութ/	տ	3470	629900	2185753000	3470
6	Դիզելային վառելիք, ամառային /Ամառային դիզ.վառելանյութ (կտրոն)/	լիտր	100470	488	49029360	100470

Հավելված N 2
№ ԲՄԱՊՁԲ-22-7/6-3 գնման պայմանագրի
N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկան	CPV-ի կոդը	*Նախատեսվում է ֆինանսավորել 2022թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ քան 26.12.2022թ., ընդ որում
			4-րդ եռամսյակ
5	Դիզելային վառելիք, ամառային /Ամառային դիզ.վառելանյութ/	09134240/2	2185753000
6	Դիզելային վառելիք, ամառային /Ամառային դիզ.վառելանյութ (կտրոն)/	09134200/2	49029360

Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարության
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ՍԻ ՓԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
տնօրեն

Ս. ԹԱՆԻԵԼՅԱՆ